Հավելված N 12

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ
/ԱՆՁՆԱԳԻՐ/

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

(Բյուջետային ծրագրի անվանումը)

1. ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1.1 ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝
Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ
1.2 ԾՐԱԳՐԻ ԴԱՍԻՉԸ՝
1118
1.3 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ՝
ՀՀ արտաքին գործերի նախարարություն
1.4 ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻՁԲԸ՝
12001 միջոցառման սկիզբը (միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ)՝ 1992թ. 12002 միջոցառման սկիզբը (ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովում)՝ 2007թ.
1.5 ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՎԱՐՏԸ՝
Միջոցառում 12001՝ շարունակական Միջոցառում 12002՝ շարունակական
1.6 ԾՐԱԳՐԻ ՆԱԽՈՐԴ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ՝
«Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ, աջակցություն Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնին, աջակցություն հայ մշակույթի միջազգային կենտրոններին»

2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ՝	
Միջազգային կազմակերպություններում ներգրավման միջոցով ՀՀ առաջնահերթությունների սպասարկում	
2.2 ԾՐԱԳՐԻ ՀԻՄՔԵՐԸ՝	
Ծրագրի իրավական հիմքերը	**Նկարագրությունը**
Միջոցառում 12001	
ՀՀ Կառավարության գործունեության 2021-2026թթ. ծրագիր /հաստատված ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշմամբ/	1.1 ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Կառավարության արտաքին քաղաքականության ուղենիշներն են Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանությունը, Արցախի ժողովրդի իրավունքների և անվտանգության ապահովումը, տարածաշրջանային խաղաղության

	հաստատումը, տարածաշրջանի ապաշրջափակումը և կայունությունը: Արտաքին և անվտանգային քաղաքականության առաջնահերթություններից է Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և համապարփակ կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ներքո՝ հայտնի սկզբունքների և տարրերի հիման վրա, Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումը, ինչպես նաև մշակութային ու կրոնական ժառանգության պահպանումը և հումանիտար խնդիրների լուծումը: Հայաստանի Հանրապետությունն օգտագործելու է իր ամբողջ ներուժը վերոնշյալ նպատակներին հասնելու համար՝ առաջնորդվելով պետական շահերով և հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության հրամայականով: -Հայաստանը շարունակելու է Եվրոպական միության և ԵՄ անդամ պետությունների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցությունը՝ հիմնվելով Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) և այլ համատեղ ստորագրած փաստաթղթերի վրա: -ՀԱՊԿ-ը դիտարկելով որպես Հայաստանի անվտանգային համակարգի կարևորագույն օղակ՝ Կառավարությունը շարունակելու է ակտիվորեն ներգրավված լինել կառույցի աշխատանքներին: 2021 թվականի սեպտեմբերին ստանձնելով ՀԱՊԿ-ի նախագահությունը՝ Հայաստանը փորձելու է իր Առաջնահերթությունների շրջանակներում ամրապնդել կազմակերպության կառուցակարգերը՝ ի նպաստ անդամ պետությունների և միջազգային անվտանգության: -Հայաստանը շարունակելու է ակտիվ մասնակցել ԱՊՀ շրջանակներում համագործակցությանը և կազմակերպությունում ընթացող գործընթացներին: Շարունակվելու է կարևորվել նաև ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումը: - Հայաստանը հավատարիմ է ՄԱԿ-ի հիմնարար արժեքներին և բարձր է գնահատում կառույցի դերը խաղաղության, ժողովուրդների համագործակցության, մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բնագավառում: Հայաստանը շարունակելու է իր

	ակտիվ աշխատանքները կառույցի շրջանակներում՝ կարևորելով կառույցի դերն ինչպես տարածաշրջանային խնդիրների լուծման, այնպես էլ համաշխարհային/համընդհանուր մարտահրավերների ձևակերպման և դրանց շուրջ աշխատանքների կազմակերպման տեսակետից: -Հայաստանը շարունակելու է ակտիվորեն մասնակցել ԵԱՀԿ-ի շրջանակներում ընթացող գործընթացներին՝ ելնելով այն հանգամանքից, որ ԵԱՀԿ-ն տարածաշրջանային անվտանգության և խաղաղության խնդիրների հասցեագրման կարևոր հարթակ է, և որ Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և համապարփակ կարգավորումը պետք է տրվի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում: - Կարևորվելու են ԵԽ-ում և միջազգային այլ կառույցներում Հայաստանի առավել ակտիվ ներգրավվածությունը և նախաձեռնողական քաղաքականությունը, հատկապես միջազգային այն կառույցների շրջանակներում, որոնց անդամ է Հայաստանը, կամ որոնց հետ կան ձևավորված գործակցության ձևաչափեր:
ՀՀ ԱԳՆ կանոնադրություն	II. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ 10. Նախարարության խնդիրներն են՝ 1) միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերը և իրավունքները ներկայացնելը. 2) օտարերկրյա պետությունների ու **միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական** և (կամ) հյուպատոսական **հարաբերությունների իրականացումը.** III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 11. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝ 4) ապահովում է միջազգային կազմակերպություններին անդամակցությունից բխող գործառույթների իրականացումը, մասնավորապես՝ ե. անդամավճարների վճարումը.

ՀՀ օրենքը «Դիվանագիտական ծառայության մասին»	Հոդված 4. Դիվանագիտական ծառայության խնդիրները 1. Դիվանագիտական ծառայության խնդիրներն են՝ … միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերը և իրավունքները պատշաճ ու հետևողական ներկայացնելը …:
Ծրագրի իրավական հիմքերի թվում են նաև միջազգային 101 կազմակերպությունների, մասնա-գիտացված մարմինների կանո-նադրությունները, կոնվենցիաները, որոնց միանալով ՀՀ-ն կանոնավոր անդամավճարներ կատարելու պարտավորություն է ստանձնել:	
Միջոցառում 12002	
ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր	-Հայաստանը շարունակելու է Եվրոպական միության և ԵՄ անդամ պետությունների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցությունը՝ հիմնվելով Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) և այլ համատեղ ստորագրած փաստաթղթերի վրա: -ՀԱՊԿ-ը դիտարկելով որպես Հայաստանի անվտանգային համակարգի կարևորագույն օղակ՝ Կառավարությունը շարունակելու է ակտիվորեն ներգրավված լինել կառույցի աշխատանքներին: 2021 թվականի սեպտեմբերին ստանձնելով ՀԱՊԿ-ի նախագահությունը՝ Հայաստանը փորձելու է իր Առաջնահերթությունների շրջանակներում ամրապնդել կազմակերպության կառուցակարգերը՝ ի նպաստ անդամ պետությունների և միջազգային անվտանգության: -Հայաստանը շարունակելու է ակտիվ մասնակցել ԱՊՀ շրջանակներում համագործակցությանը և կազմակերպությունում ընթացող գործընթացներին: Շարունակվելու է կարևորվել նաև ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումը: - Հայաստանը հավատարիմ է ՄԱԿ-ի հիմնարար արժեքներին և բարձր է գնահատում կառույցի դերը խաղաղության, ժողովուրդների համագործակցության,

	մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բնագավառում: Հայաստանը շարունակելու է իր ակտիվ աշխատանքները կառույցի շրջանակներում՝ կարևորելով կառույցի դերն ինչպես տարածաշրջանային խնդիրների լուծման, այնպես էլ համաշխարհային/համընդհանուր մարտահրավերների ձևակերպման և դրանց շուրջ աշխատանքների կազմակերպման տեսակետից: -Հայաստանը շարունակելու է ակտիվորեն մասնակցել ԵԱՀԿ-ի շրջանակներում ընթացող գործընթացներին՝ ելնելով այն հանգամանքից, որ ԵԱՀԿ-ն տարածաշրջանային անվտանգության և խաղաղության խնդիրների հասցեագրման կարևոր հարթակ է, և որ Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և համապարփակ կարգավորումը պետք է տրվի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում: - Կարևորվելու են ԵԽ-ում և միջազգային այլ կառույցներում Հայաստանի առավել ակտիվ ներգրավվածությունը և նախաձեռնողական քաղաքականությունը, հատկապես միջազգային այն կառույցների շրջանակներում, որոնց անդամ է Հայաստանը, կամ որոնց հետ կան ձևավորված գործակցության ձևաչափեր:
ՀՀ ԱԳՆ կանոնադրություն	III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 11. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝ 14) աջակցում է Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմա-կերպությունների գործունեությանը …
ՀՀ-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագիր	**3. Հասարակության իրազեկում, գիտություն, բնապահպանություն և քաղաքացիական ճգնաժամերի պլանավորմանն առնչվող խնդիրներ** 3.1 Հասարակության իրազեկում Հայաստանը նպատակ ունի ընդլայնել ՆԱՏՕ-ի, Գործընկերության և Դաշինքի հետ իր համագործակցության վերաբերյալ հասարակության

	իրազեկումը: Հայաստանը նաև նպատակադրել է ընդլայնել հասարակության իրազեկումը՝ պաշտպանական և անվտանգության համակարգերում իրականացվելիք բարեփոխումներին աջակցություն ստանալու նպատակով:

2.3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ (ԲԳԿ) ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ՝

Ըստ ՀՀ ԱԳՆ կանոնադրության /հաստատված ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի N 746 – Լ որոշմամբ/, նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրավասու է ապահովել միջազգային կազմակերպություններին անդամակցությունից բխող գործառույթների իրականացումը, այդ թվում՝ անդամավճարների վճարումը, աջակցել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

2.4 ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

Ծրագրի թիրախային շահառուները՝ Հայաստանի Հանրապետությունը և ՀՀ քաղաքացիներն են:

Ծրագիրը ծառայում է միջազգային կազմակերպությունների միջոցով ՀՀ առաջնահերթությունների սպասարկմանը

2.5 ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝

Ծրագրի միջոցառ-ման դասիչը	Ծրագրի միջոցառման անվանումը	Ծրագրի միջոցառման նկարագրությունը	Ծրագրի միջոցառման հիմնական շահառուները և փոխհատուցման շրջանակը
12001	Միջազգային կազմակերպություն ներին ՀՀ անդամացության վճարներ	Միջազգային կազմակերպությունների աշխատանքներին ՀՀ մասնակցության, Հայաստանում նրանց կողմից տարբեր ծրագրերի իրականացման ապահովում	ՀՀ քաղաքացիներ
12002			ՀՀ քաղաքացիներ

	ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովում	Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գրասենյակի վարձակալության վճար	
2.6 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ			
Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝			
Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ	Սահմանված ժամկետներում միջազգային կազմակերպությունների անդամավճարների վճարում	Ըստ արտաքին քաղաքականության առաջնայնությունների՝ միջազգային կազմա-կերպությունների շրջանակի ընտրությունը:	Դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենք ՀՀ ԱԳՆ կանոնադրություն, 11-րդ կետի 4-րդ ենթակետ ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր
ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովում	Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացում:	Տեղեկատվական կենտրոնի տարածքի ընտրություն, վարձակալության ծախսեր:	Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր
2.7 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ (ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ)			
Իրականացման եղանակը՝ տրանսֆերտներ			

Իրականացնող կազմակերպությունը՝ ՀՀ անդամակցող 109 միջազգային կազմակերպություններ, Երևանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոն

3. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

3.1 ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝		
Վերջնական արդյունքի չափորոշիչը	**Չափման միավորը**	**Հղումներ չափորոշիչը նկարագրող մանրամասն աղյուսակին**
Միջազգային կազմակերպություններին անդամակցություն, ՀՀ շահերի առաջ մղում, արդյունավետ համագործակցություն՝ այդ թվում ծրագրերի մասով	քանակ	Աղյուսակ 1

3.2 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝				
Միջոցառման դասիչը	**Միջոցառման անվանումը**	**Միջոցառման արդյունքի չափորոշիչը**	**Չափ-ման միավորը**	**Հղումներ չափորոշիչը նկարագրող մանրամասն աղյուսակին**
12001	Միջազգային կազմակերպու-թյուններին ՀՀ անդամակցու-թյան վճարներ	Անդամակցվող միջազ-գային կազմակերպու-թյունների, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի և կոնվենցիաների թվաքանակ	հատ	Աղյուսակ 2
		Հայաստանի Հանրապետությունում շահառու պետական կառավարման մարմինների քանակ	հատ	Աղյուսակ 3

12002	ՆԱՏՕ-ի հասարակա-կան տեղեկատ-վական կենտ-րոնի գործու-նեթյան ապա-հովում	Վարձակալված գրա-սենյակի ընդհանուր մակերես	քառ.մ	Աղյուսակ 4

4. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Աղյուսակ #1

Չափորոշիչի նկարագրությունը	
Չափորոշիչի անվանումը (հապավումը)	Միջազգային կազմակերպություններին անդամակցություն, ՀՀ շահերի առաջ մղում, արդյունավետ համագործակցություն՝ այդ թվում ծրագրերի մասով:
Կիրառման ոլորտ/տարածքը	Միջազգային համագործակցության բազմակողմ հարթակներ
Սահմանումը	Միջազգային կազմակերպությունների քանակ, որոնց ՀՀ-ն անդամակցում է
Չափման միավորը	Քանակ
Տեսակ/տիպը	Տրանսֆերտների տրամադրում, Միջազգային կազմակերպություններում ՀՀ-ի համար կարևորություն ներկայացնող ոլորտներում ՀՀ հետաքրքրությունների առաջմղում
Ներկայացման բացվածքը/կառուցվածքը	-Միջազգային կազմակերպություններ -Միջազգային կազմակերպությունների մասնագիտացված մարմիններ - Միջազգային կոնվենցիաներ - Միջազգային ծրագրեր
Տվյալների ստացումը	
Տվյալների հավաքագրման մեթոդը	Տվյալների հավաքագրում ՀՀ շահագրգիռ գերատեսչություններից
Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները	Տարեկան
Պատասխանատու միավորը	ՀՀ ԱԳՆ
Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական	Տվյալների հավաքագրումը լրացուցիչ ծախսեր չի ենթադրում
Այլ նշումներ	
Ցուցանիշի ելակետային տվյալը	

Հենանիշային (benchmark) ցուցանիշները	97
Թիրախային ցուցանիշը	110
Սահմանափակումները	-
Այլ	-

4.2 Աղյուսակ #2

Չափորոշիչի նկարագրությունը	
Չափորոշիչի անվանումը (հապավումը)	Անդամակցվող միջազգային կազմակերպություններին, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի և կոնվենցիաների թվաքանակ
Կիրառման ոլորտ/տարածքը	Միջազգային համագործակցության բազմակողմ հարթակներ
Սահմանումը	Միջազգային կազմակերպությունների շրջանակներում իրականցվող ընդհանուր ծրագրերի քանակ
Չափման միավորը	Հատ. ներկայացված է կուտակային կտրվածքով:
Տեսակ/տիպը	Տրանսֆերտների տրամադրում, Միջազգային կազմակերպությունների հնարավորությունների օգտագործում ի շահ Հայաստանի
Ներկայացման բացվածքը/կառուցվածքը	-Միջազգային կազմակերպություններ -Միջազգային կազմակերպությունների մասնագիտացված մարմիններ - Միջազգային կոնվենցիաներ - Միջազգային ծրագրեր
Տվյալների ստացումը	
Տվյալների հավաքագրման մեթոդը	ՀՀ անդամակցությամբ միջազգային կառույցներից անդամավճարների մասին տեղեկատվության ստացում
Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները	Տարեկան
Պատասխանատու միավորը	ՀՀ ԱԳՆ

Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական	Տվյալների հավաքագրումը լրացուցիչ ծախսեր չի ենթադրում
Այլ նշումներ	
Ցուցանիշի ելակետային տվյալը	90
Հենանիշային (benchmark) ցուցանիշները	109
Թիրախային ցուցանիշը	110
Սահմանափակումները	-
Այլ	-

4.3 Աղյուսակ #3

Չափորոշիչի նկարագրությունը	
Չափորոշիչի անվանումը (հապավումը)	ՀՀ շահառու պետական կառավարման մարմիններ
Կիրառման ոլորտ/տարածքը	Արտաքին քաղաքականության բազմակողմ հարաբերությունների ոլորտ
Սահմանումը	Հայաստանի Հանրապետությունում շահառու պետական կառավարման մարմինների քանակ
Չափման միավորը	Հատ
Տեսակ/տիպը	Միջազգային կազմակերպությունների և ՀՀ շահառու պետական կառավարման մարմինների ընդհանուր ծրագրերի իրագործում, քանակական
Ներկայացման բացվածքը/կառուցվածքը	-
Տվյալների ստացումը	
Տվյալների հավաքագրման մեթոդը	ՀՀ համապատասխան շահառու գերատեսչությունների կողմից տրամադրված տվյալների հավաքագրում, ամփոփում
Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները	Տարեկան
Պատասխանատու միավորը	ՀՀ ԱԳՆ

Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական	Տվյալների հավաքագրումը լրացուցիչ ծախսեր չի ենթադրում
Այլ նշումներ	
Ցուցանիշի ելակետային տվյալը	17
Հենանիշային (benchmark) ցուցանիշները	19
Թիրախային ցուցանիշը	19
Սահմանափակումները	

4.4 Աղյուսակ #4

Չափորոշիչի նկարագրությունը	
Չափորոշիչի անվանումը (հապավումը)	ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովում
Կիրառման ոլորտ/տարածքը	ՀՀ- ՆԱՏՕ համագործակցության շրջանակ
Սահմանումը	Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գրասենյակի վարձակալության վճար
Չափման միավորը	Վարձակալված գրասենյակի ընդհանուր մակերես, քառ./մ
Տեսակ/տիպը	Տրանսֆերտների տրամադրում, ՀՀ-ում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գրասենյակի աշխատանքների անխափան ապահովում
Ներկայացման բացվածքը/կառուցվածքը	-
Տվյալների ստացումը	
Տվյալների հավաքագրման մեթոդը	Համապատասխան կնքված վարձակալման պայմանագիր
Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները	Համաձայն պայմանագրի գործունեության ժամանակահատվածի
Պատասխանատու միավորը	ՀՀ ԱԳՆ

Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական	Տվյալների հավաքագրումը լրացուցիչ ծախսեր չի ենթադրում
Այլ նշումներ	
Ցուցանիշի ելակետային տվյալը	177.4 ք.մ.
Հենանիշային (benchmark) ցուցանիշները	177.4 ք.մ.
Թիրախային ցուցանիշը	177.4 ք.մ.
Սահմանափակումները	-

ՏԵՂԵԿԱՆՔ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐԻ

5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝
Ծրագիրն ուղղված է միջազգային կազմակերպությունների աշխատանքներին ՀՀ մասնակցության, երկրում նրանց կողմից տարբեր ծրագրերի իրականացման ապահովմանը և միջազգային հարաբերություններում ՀՀ առաջնահերթությունների սպասարկմանը: Հայաստանը անդամավճար է փոխանցում 110 միջազգային կազմակերպությունների և ծրագրերի/կոնվենցիաների: Փոխանցումները կատարվում են հաստատված ժամանակացույցով: Հաշվի առնելով ՀՀ կառավարության ծրագրի առաջնահերթությունները 2024-2026թթ. միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ ծրագրով ներառվել է նոր կազմակերպություն իր անդամավճարով. Մասնավորապես, նախատեսվել է տարեկան 5000 եվրո կամավոր վճար Առավել նվազ զարգացած, դեպի ծով ելք չունեցող և փոքր կղզի զարգացող պետությունների հարցերով բարձր հանձնակատարի գրասենյակին (High Representative for the Least Developed Countries, Landlocked Developing Countries and Small Island Developing States (OHRLLS): Առավել նվազ զարգացած, դեպի ծով ելք չունեցող և փոքր կղզի զարգացող պետությունների հարցերով ՄԱԿ բարձր հանձնակատարի գրասենյակը հիմնադրվել է 2001թ.-ին: Հայաստանը ներկայումս դեպի ծով ելք չունեցող զարգացող պետությունների խմբի բյուրոյի անդամ է, ինչը որոշակի լրացուցիչ պարտավորություններ է ենթադրում LLDC-ների օրակարգի առաջմղման գործում և խմբի անդամների աշխատանքների համակարգման հարցում:

Մի շարք կազմակերպություններում վերանայվել են կանոնավոր բյուջեի ընդհանուր գումարները՝ հաշվի առնելով տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումները և դրանց հետևանքով առաջացած սղաճը:

Մասնավորապես 2022թ. ընթացքում վերանայվել է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության /International Atomic Energy Agency/ բյուջեն՝ Վիեննայում մի քանի փուլով անցկացված քննարկումների արդյունքում: ԱԷՄԳ Կանոնավոր բյուջեի ընդհանուր գումարը որոշվել է ավելացնել 4.9%-ով (19.4 մլն. եվրո): Արդյունքում 2023թ. դրությամբ ավելացել է ՀՀ անդամավճարի չափը ԱԷՄԳ-ում 4,9 տոկոսի չափով՝ կազմելով 24959 եվրո:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը 23.01.2023 թիվ 1/ԼԽ/458-2023 գրությամբ, հղում կատարելով կոնվենցիայի քարտուղարության՝ արդեն 2-րդ տարի անընդմեջ ուղարկվող խնդրանքին, խնդրել է մասնակից պետություններին ՄԱԿ-ի ԵՏՀ Օրհուսի կոնվենցիայի նվազագույն կամավոր վճարի չափը այսուհետ նախատեսել տարեկան 1000 ԱՄՆ դոլար՝ նախկին 500-ի փոխարեն: ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուս) կոնվենցիային Հայաստանը միացել է 1988թ.-ից, իսկ վավերացրել է կոնվենցիան 2001թ.-ին: Նախկինում կամավոր վճարները փոխանցվում էին եռամյա պարբերականությամբ:

Եվրոպայի խորհրդում /Council of Europe/ ՌԴ անդամակցության դադարեցումից և ՌԴ կողմից 2022թ. ֆինանսական պարտավորությունը չկատարելու հետևանքով դեռ 2022թ.-ից որոշում էր կայացվել գումարը բաժանել անդամ պետությունների միջև՝ անդամավճարների դրույքներին համապատասխան: Հայաստանի պարագայում 2022 թվականի լրացուցիչ ֆինանսական պարտավորության չափը կազմել էր 37,500 եվրո: 2023թ-ից սկսած, այդ գումարին ավելացել է սղաճը, որի արդյունքում կանոնավոր անդամ-երկրների անդամավճարների չափը էլ ավելի է մեծացել: ՀՀ անդամավճարի չափը 2023թ. այն արդեն իսկ սահմանվել է 557312,40 եվրո՝ 2023թ. համար ՀՀ տարեկան ծրագրով նախատեսված 475,000 եվրոյի փոխարեն:

Համաձայն միջազգային կազմակերպությունների հանդեպ Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով առաջացած պարտքի մարման (միջազգային կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության կողմից համատեղ հաստատված) ժամանակացույցի՝ Միավորված ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) պարտքը 2023թ. տարեվերջին կկազմի 100,044 եվրո, իսկ 2024թ. տարեվերջի դրությամբ՝ 50022 եվրո: 2025թ. 50022 եվրո-ի վճարումից հետո պարտքը կհամարվի ամբողջությամբ մարված:

Անդամավճարի գծով 2023 թվականի բյուջեով 109 կազմակերպություններին հատկացված գումարը կազմել է 2,012,288.6 հազ. դրամ:

Ելնելով վերոնշյալ վերլուծությունից, 2024թ. առաջարկում ենք 110 կազմակերպություններին հատկացնել 2,047,244.24 հազ.դրամ (հաշվարկները ներկայացված են՝ հավելված 2-ում):

5.2 ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝		
Վերջնական արդյունքի չափորոշիչը	**Ցուցանիշը**	**Ժամկետը**
Միջազգային կազմակերպություններին անդամակցություն, ՀՀ շահերի առաջ մղում, արդյունավետ համագործակցություն՝ այդ թվում ծրագրերի մասով, քանակ	110	2026
Վարձակալված գրասենյակի ընդհանուր մակերես, ք.մ	177,4	Համաձայն պայմանագրի

5.3 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝							
Միջոցառման դասիչը	**Միջոցառման անվանումը**	**Արդյունքի չափորոշիչը**	**ՖՏ-2**	**ՖՏ-1**	**ՖՏ**	**Ֆ+1**	**ՖՏ+2**
12001	Միջազգային կազ-մակերպություններին ՀՀ անդամակցու-թյան վճարներ	Անդամակցվող միջազգային կազմակերպու-թյունների, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի և կոնվենցիաների թվաքանակ	90	109	110	110	110
		Հայաստանի Հանրապետությունում Հ շահառու պետական կառավարման մարմինների քանակ	17	19	19	19	19
12002	ՆԱՏՕ-ի հասարա-կական տեղեկա-տվական կենտրոնի գործունեության ապահովում	Վարձակալված գրասենյակի ընդհանուր մակերես	177.4	177.4	177.4	177.4	177.4

5.4 ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ (հազ.դրամ)՝						
Միջոցառման դասիչը	**Միջոցառման անվանումը**	**ՖՏ-2**	**ՖՏ-1**	**ՖՏ**	**Ֆ+1**	**ՖՏ+2**

12001	Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ	1971932.96	2012288.60	2047244.24	1937156.00	1937724.30
12002	ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովում	7200.00	9600.00	9600.00	9600.00	9600.00
Ընդամենը ծրագիր		1979132.96	2021888.60	2056844.24	1946756.00	1947324.30
5.5 ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (հազ.դրամ)՝						
Ֆինանսավորման աղբյուրներ		**ՖՏ-2**	**ՖՏ-1**	**ՖՏ**	**Ֆ+1**	**ՖՏ+2**
Ներքի աղբյուրներ, որից՝						
ՀՀ պետական բյուջե		1979132.96	2021888.60	2056844.24	1946756.00	1947324.30
Արտաբյուջետային ֆոնդեր						
Այլ						
Արտաքին աղբյուրներ, որից						
Նվիրատու կազմակերպություններ						
Այլ						
Ընդամենը բոլոր աղբյուրների գծով		1979132.96	2021888.60	2056844.24	1946756.00	1947324.30
5.6 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝						